ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտի 1

№ 2083-Ա « 10 » հունիսի 2024 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ ՈՒԶԲԵԿՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՏԱՇՔԵՆԴ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով «Թել-Սել» ԲԲ ընկերության գլխավոր տնօրեն Ա. Ղազարյանի հրավերը՝ «ԲՊՑ» և «ASSO» ընկերությունների կողմից Տաշքենդում ներդրված Տրանսպորտի միասնական համակարգի շրջանակներում փորձի փոխանակման նպատակով և ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով.

1.Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը 2024 թվականի հունիսի 11-ից 14-ը ներառյալ գործուղել Ուզբեկստանի Հանրապետության մայրաքաղաք Տաշքենդ հետևյալ կազմով.

Սուրեն Գրիգորյան	Երևանի քաղաքապետի տեղակալ
Սարգիս Մանուկյան	«Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

2. Ընդունել ի գիտություն, որ Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանի գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի միջոցների հաշվին, իսկ «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) տնօրեն Սարգիս Մանուկյանի գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվում են Ընկերության 2024 թվականի բյուջեի միջոցների հաշվին:

3. Ընկերության տնօրեն Սարգիս Մանուկյանի բացակայության ընթացքում տնօրենի պարտականությունները վերապահել նույն Ընկերության տնօրենի տեղակալ Արսեն Ներսիսյանին:

4. Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ